ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Արմեն Հայրապետյան - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար,

   Տիգրան Եսայան - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի միջազգային համագործակցության բաժնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Փարիզ), 2024 թվականի մայիսի 25-31-ը

3. **Հրավիրող կողմը.**

   Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպություն (ԿԱՀԿ)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   ԿԱՀԿ ազգային պատվիրակների համաշխարհային ասամբլեայի 91-րդ տարեկան գլխավոր նստաշրջանին մասնակցելու նպատակով

5. **Քննարկված թեմաները.**

   ԿԱՀԿ գլխավոր նստաշրջանի ընթացքում քննարկվել են մի շարք թեմաներ. հաստատվել է ԿԱՀԿ գլխավոր նստաշրջանի նախնական ծրագիրը, ԿԱՀԿ տարածաշրջանային հանձնաժողովների գործունեությունը, 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունը, Խորհրդի աուդիտորների հաշվետվությունը, ԿԱՀԿ գլխավոր տնօրենի, Խորհրդի անդամների, տարածաշրջանային հանձնաժողովների բյուրոների, ցամաքային և ջրային կենդանիների առողջության ստանդարտների հանձնաժողովների անդամների, կենդանիների հիվանդությունների գիտական և կենսաբանական ստանդարտների հանձնաժողովների անդամների ընտրությունները և այլն:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Հայկական պատվիրակությունը մի շարք երկրների պատվիրակների հետ ունեցել է երկկողմ առանձին հանդիպումներ՝ մասնավորապես.

   - Ամերիկայի Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության համագործակցության շրջանակներում քննարկվել են Հայաստանից որոշ

ապրանքատեսակների ԱՄՆ արտահանման, ինչպես նաև համապատասխան մասնագետների վերապատրաստմանն առնչվող հարցեր,

- Բելառուսի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համագործակցության շրջանակներում՝ անդրադարձ է եղել երրորդ երկրներից Բելառուսի Հանրապետության տարածքով կենդանի կենդանիների ու կենդանական և ոչ կենդանական ծագման բեռների դեպի Հայաստանի Հանրապետություն տեղափոխման ժամանակ ծագած խնդիրներին,
- Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համագործակցության շրջանակներում՝ ԻԻՀ-ի տարածքով, որպես տարանցիկ երկիր, Հայաստանի Հանրապետությունից կենդանի կենդանիների այլ երկրներ արտահանման, ինչպես նաև իրանական մի շարք կազմակերպությունների ԵԱՏՄ երրորդ երկրների ռեեստրում գրանցվելու վերաբերյալ հարցեր:
- Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության համագործակցության շրջանակներում՝ քննարկումներ են ընթացել Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն կաթնամթերքի արտահանման, ինչպես նաև մի շարք երկրների՝ ԵԱՏՄ երրորդ երկրների ռեեստրում գրանցվելու ժամանակ առաջացած խնդիրների շուրջ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել երկուստեք արագ արձագանքել ռուս-վրացական Վերին Լարսի սահմանային անցակետում առաջացող խնդիրներին և հրատապ լուծում տալ:
- Եվրամիության և Հայաստանի Հանրապետության համագործակցության շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետությունից Եվրամիության երկրներ ձկան արտահանումը եղել է Եվրոպական հանձնաժողովի առողջապահության և սննդամթերքի անվտանգության գլխավոր տնօրինության պատվիրակության (DG SANTE) հետ հանդիպման գլխավոր առանցքը:
- Նստաշրջանի ընթացքում հայկական պատվիրակությունը մասնակցել է նաև կենդանիների դաբաղի և այլ անդրսահմանային հիվանդությունների հիմնական ռիսկերի վերհանման, կանխարգելման և հսկողության Անդրկովկասի և հարևան երկրների տարածաշրջանային համագործակցությանն ուղղված հանդիպմանը (EuFMD), որի ժամանակ Կովկասի 4 հարևան երկրների (Հայաստան, Վրաստան, Իրան, Ադրբեջան) կողմից ներկայացվել են իրենց երկրներում այդ հիվանդության կանխարգելման ուղղությամբ կատարված աշխատանքներն ու առկա իրավիճակը:

Միաժամանակ աշխատանքներ են տարվել 8 երկրների (Հայաստան, Վրաստան, Իրան, Ռուսաստան, Իրաք, Թուրքիա, Ադրբեջան, Պակիստան) լիազոր մարմինների միջև կենդանիների հիվանդությունների, բռնկումների և պատվաստումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով ստորագրվելիք համաձայնագրի սկզբունքների շուրջ:

Հանդիպման ընթացքում հայկական կողմը ներկայացրել է դաբաղի և այլ անդրսահմանային հիվանդությունների վերաբերյալ շնորհանդես:

Հարկ է նշել նաև, որ ի կատարումն Հայաստանի Հանրապետության Վարչապետի՝ 2024 թվականի մարտի·19-ի № 02/06.5/10148-2024 հանձնարարականի՝ հայկական պատվիրակությունը ԿԱՀԿ 91-րդ գլխավոր նստաշրջանի ընթացքում օտարերկրյա գործընկերներին է (ԱՄՆ, ԵՄ, ԿԱՀԿ, ՄԱԿ ՊԳԿ, ԻԻՀ, ԵԱՏՄ և այլ երկրներ) տրամադրել «Խաղաղության խաչմերուկ»-ի վերաբերյալ պատրաստված բրոշյուրները՝ ներկայացնելով «Խաղաղության խաչմերուկ»-ի կոնցեպտը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ԿԱՀԿ համապատասխան ներկայացուցիչների հետ որոշակի մտքեր են փոխանակվել ԿԱՀԿ կողմից Հայաստանի Հանրապետությունում սպասվող աշխատանքների վերաբերյալ, մասնավորապես՝ քննարկվել են ԿԱՀԿ հնարավոր աջակցությունը անասնաբուժության ոլորտում բացերի վերհանման (PVS Gap Analysis), անասնաբուժական լաբորիատորիաների համար անասնաբուժական կարողությունների գնահատման (PVS Evaluation), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժական կրթություն ստացող ուսանողների վերապատրաստման օժանդակության հարցերում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- Նախքան հայկական պատվիրակության ԿԱՀԿ 91-րդ գլխավոր նստաշրջանին մասնակցելը՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից առաջարկվել էր կենդանիների, մասնավորապես դաբաղի պատվաստանյութ արտադրող ընկերությունների հետ քննարկել կենդանիների հիվանդությունների պատվաստանյութերի համատեղ արտադրության հարցը, և հայկական պատվիրակության՝ ԻԻՀ-ի պատվիրակության հետ հանդիպման

ժամանակ իրանական կողմից եղել է առաջարկ՝ ԻԻՀ-ի Ռազիի պատվաստանյութի և շիճուկի գիտահետազոտական ինստիտուտի (Razi Vaccine & Serum Research Institute) հետ խորացնել համագործակցությունը համապատասխան ոլորտում՝ հետագայում դիտարկել նաև համատեղ արտադրություն հիմնելու հնարավորությունը:

- Հայկական կողմի նախաձեռնությամբ ԿԱՀԿ համապատասխան ներկայացուցիչներին առաջարկվել է 2024-2025 թվականների ընթացքում ԿԱՀԿ-ի հովանավորությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացնել անասնաբուժության ոլորտում բացերի վերհանման (PVS Gap Analysis), անասնաբուժական լաբորիատորիաների համար անասնաբուժական կարողությունների գնահատման (PVS Evaluation) աշխատանքներ, իսկ անասնաբուժական կրթություն ստացող ուսանողներին՝ վերապատրաստել ԿԱՀԿ ստանդարտներին համապատասխան:
- Հաշվի առնելով Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմնի կողմից արձանագրված այն հանգամանքը, որ իրենց կողմից արտահանման արգելանքը հանվել էր հայկական կաթնամթերք արտադրող 4 ընկերությունների համար, սակայն դեռևս այդ ընկերությունների կողմից Ռուսաստանի Դաշնություն կաթնամթերք չէր արտահանվել, առաջարկվեց հետագա արտահանման ծավալների ընդլայնմանը զուգահեռ մեծացնել կաթնամթերք արտահանողների ցանկը մեծացնելու հնարավորությունը:
- Եվրոպական հանձնաժողովի առողջապահության և սննդամթերքի անվտանգության գլխավոր տնօրինության պատվիրակության (DG SANTE) հետ Հայաստանի Հանրապետությունից Եվրամիության երկրներ ձկան արտահանման հարցը քննարկելիս ԵՄ կողմին առաջարկվեց հարցի վերաբերյալ հայկական կողմին հրատապ ներկայացնել իրենց հստակ դիրքորոշումը, իսկ դրա բացակայության դեպքում՝ առաջարկում ենք ներգրավել նաև պետական շահագրգիռ մարմիններին՝ հարցի քննարկման մակարդակը բարձրացնելու համար:

9. Ստորագրությունը, ամսաթիվը. 05 հունիսի 2024թ.